Իր կողմից ստիպված լինելով ձեռք առնել համապատասխան միջոցներ՝ իմ կառավարությունը չի կորցնում իր յոյսը, որ ձեր կառավարությունը ընդառաջ գնալով Հայաստանի Հանրապետության կառավարության խաղաղասիրական ձգտումներին՝ նրա հետ բանակցելու ժամանակ կը գտնէ այնպիսի հիմունքներ, որոնք ընդունելի կը լինեն միաժամանակ երկու կողմերի շահերի և պատուոյ համար:

Սպասելով ձեր կառավարության պատասխանին՝ մնամ յարգանքներով արտաքին գործոց նախարար՝ Հ. Օհանջանեան:

Այսպիսով, ուրեմն, գինադադարի բանակցութիւններն անյաջող ելք ունեցան, որի հետևանքով և վերսկսուեցին ռազմական գործողութիւնները: Երէկ, նոյեմբ. 10-ին, մենք ստացանք Անգորայի կառավարութիւնից մէկ նոր հեռագիր՝ գրուած նոյեմբ. 7-ին: Շատ հետաքրքրական է այդ հեռագիրը, որովհետև նա դնում է մեր առջև Անգորայի կառավարութեան առաջարկած այն պայմանները, որոնք պիտի հաշտութեան հիմք ծառայեն: Ահա նրա բովանդակութիւնը.

8 նոյեմբ. 1920թ. Անգորա.

Հայկական Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութեան

Երևան.

Թիւրքիոյ Ազգային Մեծ ժողովը, նոյն օրւայ մէջ, ստացաւ ամսոյ 3-ին ձեր հաշտութեան առաջարկը (որը՝ ինչպէս երևում է, նանապարհին խաչաձևած է նոյեմբ. 1-ին մեր արած հաշտութեան առաջարկին), և մեր արևելեան ճակատի հրամանատարի թշնամութեանց ժամանակաւոր դադարի պայմանները ձեր զօրամասերի կողմից ընդունելու լուրը: Այս առթիւ պատիւ ունեմ հաղորդելու ձեր հաշտութեան համար մեր հետևեալ պայմանները:

1. Հայ-թիւրքական սահմանների հարցը վիճակագրական և հանրաքէի պարզ հարց է լինելու. համաձայն նախագահ Վիլսընի և բոլշևիկների հռչակած ինքնորոշման սկզբունքների, բոլոր վիճելի շրջանների ազգաբնակութիւնները պիտի հրաւիրուեն որոշելու իրենց քաղաքական ապագան: Նրանք կարող են առանց որևէ մէկից կախում ունենալու, վճռել իրենց անկախ պետութեան կազմը և կամ յայտնել, թէ երկու երկիրներից որին են կցւում: Ձեր ժողովրդի կատարեալ ազատութիւնը ապահովելու համար մենք ընդունում ենք, որ վիճելի շրջանների պահպանութիւնը լինի, մինչ այդ մեր երկրների ժանդարմական մասերով: Այդ հանրաքէն լինելու է, ի հարկէ, որքան կարելի է շուտ: Անգորայի կառավարութիւնը անկեղծ և խոր համոզմունք ունի, որ այս ձևի լուծումը բուն արդարութիւնն է և համապատասխան բոլոր մարդկութեան շահերին, որով նաև հայ և թիւրք ժողովուրդների, որոնք ապրում են վիճելի հողամասերում: Սակայն, դժբախտաբար, մենք կարծում ենք, որ արևմուտքի իմպերիալիստներին, մանաւանդ Անգլիային հաճելի լինելու համար Երևանի կառավարութիւնը տրամադիր է այլ ձևի լուծման, որը մեծ վիրաւորանք է հասցնում Աֆրիկայի և Ասիայի ժողովուրդների հանդէպ Արևմուտքի պաշտպանների կողմից քարոզած և ի գործ դրած քաղաքական վարդապետութիւններին:

2. Թիւրքիան յանձն է առնում իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները տալ իր հարևաններին, որպէսզի նրանք կարողանան կատարեալ անկախութեան և ապահովութեան մէջ գարգանալ: